ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1963 Общественные науки

Ս. Ջ. Ալիխանյան

ՊԱՅՔԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Թուրքիայի քեմալական կառավարությունը Հայաստանում սովետական իշխանությունն հաղթանակից անմիջապես հետո դրժելով Հայաստանի վերաբերյալ ՌՍՖՍՌ-ի կառավարության արած բոլոր հայտարարություններն ու հավաստումները, հրաժարվեց վերանայել Ալեքսանդրապոլի նվաստացուցիչ պայմանագիրը, փորձում էր այն պարտադրել Սովետական Հայաստանին, և մինչև Ալեքսանդրապոլի ազատագրումը օկուպացված շրջաններում շարունակում էր բնաջնջման ու կողոպուտի հին քաղաքականությունը՝ նոր պատրվակներով։

Այս հարցերի լուսաբանումը այժմ անհրաժեշտ է այն պատճառով, որ մեր պատմական գրականության մեջ, հատկապես Վ. Գուրկո-Կրաժինի, Մ. Պավլովիչի, Ա. Միլլերի, Ի. Արալովի, Ս. Կուզնեցովայի տարածում և ճանաչում գտած աշխատություններում իդեալականացվում է քեմալիզմը, չի բացահայտվում նրա շովինիստական, ագրեսիվ քաղաքականությունը մյուս ժողովուրդների և, հատկապես, հայ ժողովրդի նկատմամբ, ցույց չի տրվում կոմունիստական պարտիայի ու սովետական կառավարության պայքարը քեմալականների թշնամական, ագրեսիվ գործողությունների դեմ։

Սույն հոդվածի նպատակն է համառոտակի լուսաբանել կոմունիստական պարտիայի ու սովետական կառավարության մղած պայքարը Ալեքսանդրապոլի պայմանագրի վերացման և Ալեքսանդրապոլի ազատագրման համար։

* * *

Հայաստանը սովետական ռեսպուբլիկա հռչակելուց հետո նրա առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ դաշնակների տապալված կառավարության կողմից Թուրքիայի հետ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված ստրկացուցիչ պայմանագրի չեղյալ հայտարարելը և Թուրքիայի հետ նոր, արդարացի հաշտության պայմանագիր կնքելը։

Հայաստանի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն, արտահայտելով հայ ժողովրդի իղձերն ու ձգտումները, 1920 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի սովետական ռեսպուբլիկա հռչակելու առթիվ հրատարակած իր դեկլարացիայում կոչ էր անում հարևան բոլոր ժողովուրդներին ու նրանց կառավարություններին, այդ թվում նաև Թուրք ժողովրդին ու քեմալական կառավարությանը, վերջ տալ թշնամանքի և ազգամիջյան պատերազմների քաղաքականությանը, բոլոր վիճելի հարցերին տալ խաղաղ ու արդարացի լուծում, հիմք դնել բարիդրացիական հարաբերություններին։

Անդրադառնալով Թուրքիայի ու Հայաստանի միջև կնքվելիք հաշտության պայմանագրին և վիճելի տերիտորիաների կարգավորման հարցին, Ռեկոմն իր դեկլարացիայում անկեղծ սպասումներով գրում էր. «Ոչ թե հաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի

միջև կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»[1]։

Հայաստանի Ռևկոմը այս նույն ոգով ողջույնի հեռագիր է հղում Թուրքիայի քեմալական կառավարությանը և վստահություն հայտնում, որ վերջինս կգտնի հաշտության բանակցությունները դաշնակների պատվիրակության հետ և դեկլարացիայում շարադրված հիմունքներով հաշտության բանակցություններ կսկսի Հայաստանի սովետական կառավարության հետ։

ՌԿ(բ)Պ կենտկոմի կովկասյան բյուրոն Հայաստանի ռևկոմին հանձնարարում է դեկլարացիան անմիջապես ուղարկել Անկարա, իսկ Թուրքիայի կառավարությանը դիմել ողջույնի հեռագրով։ Դեռևս Ռևկոմի Իջևանում եղած ժամանակ Օրջոնիկիձեն նոյեմբերի 29-ին ցուցում է տալիս Ավիսին կապ հաստատել Ալեքսանդրապոլի հետ, Մգիվանուն հայտնել Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու մասին և դիմել Կարաբեքիրին, որպեսզի նա անհապաղ դադարեցնի հաշտության բանակցությունները Խատիսյանի պիսավորած պատվիրակության հետ։ Այդ բանը Ավիսին չի հաջողվում ո՛չ նոյեմբերի 30-ին, ո՛չ դեկտեմբերի 1-ին։ Դեկտեմբերի 2-ին Օրջոնիկիձեն կրկին կապվում է Կասյանի հետ և հանձնարարում դեկլարացիան շտապ ուղարկել քեմալական կառավարությանը։ Այդ ժամանակ արդեն ստացված էր Կարաբեքիրի ողջույնի կեղծ հեռագիրը, որտեղ նա «ողջունում էր» Կարմիր Բանակի մուտքը Հայաստան, խոստանում նրա հետ «ուս-ուսի, որպես դաշնակից բանակներ, մինչև վերջ մարտնչել համաշխարհային իմպերիալիզմի դեմ, հանուն աշխատավոր պրոլետարիատի բարօրության ու երջանկության»[2]։

Օրջոնիկիձեն Ռևկոմին խորհուրդ է տալիս ողջույնի պատասխան հեռագիր ուղարկել քեմալական կառավարությանը, և պահանջել նախ՝ դադարեցնել բանակցությունները դաշնակցական տապալված կառավարության պատվիրակության հետ և ապա, նոր բանակցություններ սկսել Ռևկոմի հետ՝ Սովետական Ռուսաստանի միջնորդությամբ։

Նույն օրը Լեգրանը Երևանից կապվելով Դիլիջան՝ Ռևկոմի հետ, խնդիր է դնում շտապ մեկնել Երևան. «Իրադրությունը պահանջում է Ռևկոմի շտապ գալը, պետք է արտակարգ միջոցների դիմել Ալեքսանդրապոլում վարվող բանակցությունների առթիվ»[3]։

Այսպիսով, Օրջոնիկիձեն և Լեգրանը ամեն ինչ անում էին Ալեքսանդրապոլում դաշնակների և Թուրքիայի միջև պայմանագրի կնքումը կանխելու համար։

Բայց հակառակ իր «ռևոլյուցիոն» հայտարարություններին, Հայաստանը Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա հռչակելուց 4 օր հետո Թուրքիան Ալեքսանդրապոլում դաշնակների հետ կնքեց հաշտության պայմանագիր։

Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորացուցիչ կողմը ոչ միայն այն էր, որ Թուրքիան իրավական ուժ էր տալիս Հայաստանի տերիտորիաների բռնա-

---

1 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Հայկ. ՍՍՌ գիտ. ակադ. հրատ., Երևան, 1960, էջ 405։

2 Центральный Партийный Архив ИМЛ при ЦК КПСС ф. 85, оп. 14, д. 35.

3 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ց. 2, գ. 1152։

դրավմանը, այլև գլխավորապես այն, որ Հայաստանը ռազմա-քաղաքական տեսակետից ենթարկվում էր Թուրքիային և միջազգային ոչ մի ինքնուրույն գործարք, առանց Թուրքիայի թույլտվության, նա չէր կարող կատարել որևէ պետության հետ։ Հայաստանի ամբողջ ներքին կյանքը և արտաքին հարաբերությունները, այսպիսով, ենթարկվելու էին Թուրքիայի հսկողությանը։ Թուրքիան իր վրա էր վերցրել Հայաստանի պետական-հասարակական կառուցվածքի դեմ ուղղված ներքին ամեն մի շարժում ճնշելու միսիան և արտաքին միջամտության դեմ պայքարի պատասխանատվությունը։ Այս կետը տվյալ պահին ամբողջովին ուղղված էր Սովետական Ռուսաստանի դեմ։

«Թուրքիայի... կառավարությունը պարտավորվում է,—ասված էր պա մանագրում,—իր զինված օգնությունը տրամադրել Հայաստանին, երբ այդ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը և երբ Հայաստանի ռեսպուբլիկան դիմի իրեն հիշված խնդրանքով»[4]։ Այս կետն էլ հենց հիմք հանդիսացավ, որպեսզի դաշնակների փետրվարյան ավանտյուրայի ժամանակ նրանց օգնություն ցույց տրվեր՝ զինված հեղաշրջման միջոցով սովետական իշխանությունը տապալելու համար։

Դեկտեմբերի 2-ին Կասյանը Հայաստանի ռևկոմի դեկլարացիան և իր ողջույնը Ղարաքիսայի վրայով ուղարկում է Ալեքսանդրապոլ, Կարաբեքիրին։ Դեկտեմբերի 5-ին հայերի այդ դահիճը՝ Կարաբեքիրը, Ռևկոմին տալիս է հետևյալ կեղծավոր պատասխանը.

«Ձեր հեռագիրը մեզ ուրախություն բերեց Հայաստանում բանվորա-գյուղացիական հանրապետության և մեծ Խորհրդային Ռուսաստանի հետ սերտ բարեկամական կապ հաստատելու մասին։ Սույն տարվա դեկտեմբերի 4-ին տված հեռագրով, դուք ցանկություն եք հայտնում Հեղափոխական Հայաստանի և Տաճկաստանի միջև խաղաղության նոր բանակցություններ սկսելու մասին։ Մոտիկ ապագայում կհրավիրվի կոնֆերանս, որտեղ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ միասին քննության կառնվեն ընդհանրապես կովկասյան խնդիրները»[5]։

Քեմալականները շուտով հրաժարվեցին նաև սրանից։ Բայց ուշագրավն այն է, որ Թուրքական պաշտոնական անձիք միմյանց հետևից կեղծ ողջույններ էին հղում Սովետական Հայաստանին։ Վրաստանում քեմալական կառավարության ներկայացուցիչ Քյազիմ բեյը հրապարակային ավելի որոշակի հայտարարությամբ հանդես եկավ։ ՌՍԴՍՌ մամուլի բյուրոյի ներկայացուցչին տրված պատասխանում նա ասել է. «Մենք համարում ենք Հայաստանում Խորհրդային իշխանություն սահմանելը շատ նպաստավոր դեպք... Խորհրդային իշխանությունը Հայաստանում մեզ համար ընդունելի կլինի։ Նա մեզ հնարավորություն կտա համաձայնության գալ Անկյորայի և Հայաստանի միջև, նաև հնարավորություն՝ մերձենալ Խորհրդային Ռուսաստանին, քանի որ այն վտանգը, որ ներկայացնում էր իրենից դաշնակցական Հայաստանը, կվերացվի»[6]։

Նման «ռևոլյուցիոն» հայտարարությունների ու հավաստումների նպատակը մեկն է եղել՝ կեղծ ռևոլյուցիոնությամբ արժանանալ սովետական ղեկավարների վստահությանը, բթացնել ու կուրացնել սովետական դիվանա-

4 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 400։

5 «Կոմունիստ», № 3, 8 դեկտեմբերի 1920 թ.։

6 «Կոմունիստ», № 9, 15 դեկտեմբերի 1920 թ.։

դիտությանը, խաբել հասարակական կարծիքը Սովետական Ռուսաստանում և աշխարհի մյուս երկրներում, հատկապես պայքարի ելնող գաղութային երկրներում և բուն Թուրքիայում։

Մինչև Ռևկոմի Երևան հասնելը և նրա առաջին դիվանագիտական զրույցները Կարաբեքիրի հետ, շատերը հավատում էին, որ քեմալականներն իրոք պայքարում են միայն դաշնակներին, որպես Անտանտի գործակալների, պատժե ու համար, որ նրանց հարձակումը Հայաստանում ագրեսիվ նպատակներ չի հետապնդում, որ նրանց միակ նպատակը «հայ ժողովրդին Անտանտի ստրկությունից ազատելը և պրոլետարական կարգեր ստեղծելն է», որ այս գործում նրանք ՌՍՖՍՌ-ի դաշնակիցներն են, որ նրանք անհամբեր սպասում են Կարմիր Բանակի Հայաստան և Վրաստան մտնելուն, որպեսզի իրենց թիկունքն ապահովելով կարողանան արևելյան բանակը տեղափոխել արևմտյան ռազմաճակատ՝ «իմպերիալիզմին վերջնական և կործանիչ հարված հասցնելու համար»։

Իրականում քեմալականները Հայաստանում ինչպես սովետական իշխանության հաստատումից առաջ, այնպես էլ նրանից հետո շարունակում էին երիտթուրքերի թշնամական, ջարդարարական, կողոպտիչ քաղաքականությունը, միայն ա ն տարբերությամբ, որ երիտթուրքերն իրենց հայաջինջ քաղաքականությունը փորձում էին արդարացնել «դավաճան հայերին պատժելու» ձգտումով, իսկ քեմալականները՝ «դաշնակներին որպես Անտանտի դաշնակցի պատժելու» և «Հայաստանում բանվորա-գյուղացիական կարգեր» հաստատելու լոզունգներով։

Քեմալականներն իրենց «ռևոլյուցիոն» ողջույնների տարափի տակ արագացրին ու կնքեցին դաշնակների հետ Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմանագիրը, որպեսզի դրանով Սովետական Հայաստանի կառավարությանը կանգնեցնեն կատարված փաստի առաջ։ Այնուհետև, դրանից անմիջապես հետո, երբ Ռևկոմը դեռ Երևան չէր հասել, սկսեցին ճչալ, թե իրենք չեն կարող վստահել հայ բոլշևիկներին, քանի որ նրանք հայ են։ Այս պատրվակի տակ էլ սկսեցին թաքցնել Ալեքսանդրապոլից իրենց չհեռանալու իսկական պատճառները։

* *

Հայաստանում սովետական իշխանության հաստատման մասին Օրջոնիկիձեի նոյեմբերի 29-ի հեռագիրը ստանալուն պես նոյեմբերի 30-ին Քաղբյուրոն քննում է հայ-թուրքական հարաբերությունների հարցը և որոշում խաղաղ բանակցությունների միջոցով լուծել դրացի այդ ժողովուրդների տերիտորիալ դարավոր վեճը։ Քաղբյուրոն նպատակահարմար է դտնում Թուրքիա ի և Հայաստանի սովետական կառավարության միջև նոր բանակցություններ սկսել՝ Սովետական Ռուսաստանի ակտիվ միջնորդությամբ, սահմանի հարցը որոշել Սովետական Ռուսաստանի մասնակցությամբ հայ-թուրքական խառը հանձնաժողովի միջոցով, ինչպես նաև կնքել սովետա-թուրքական բարեկամության պայմանագիր։

Դեկտեմբերի 1-ին Կենտկոմից Օրջոնիկիձեին տրվում է հետևյալ հեռագիրը.

«Մենք որոշել ենք համաձայնություն տալ պայմանագիր կնքելու առիթով։ Հանձնաժողով կուղարկենք, Չիչերինի համապատասխան նոտան կտրվի։ Պետք է կասեցնել թուրքերի շարժումը Բաթումիի վրա, քեմալականները պետք է ճա-

նաչեն Հայաստանի անկախությունը, նրանց առայժմ վստահել չի կարելի, նրանք մեծ խորամանկներ են, այսպիսին է քաղբյուրոյի որոշումը»[7]։

Նույն օրը Չիչերինը Մդիվանուն հանձնելու համար Լեգրանին հղում է հետևյալ հեռագիրը.

«...Մեզ ցանկալի է իմանալ. Թուրքական կառավարությունը ստացե՞լ է արդյոք Ռեքիր Սամիի հետ մեր մշակած պայմանագրի նախագիծը, որը Յուսուֆ Քեմալի հետ ուղարկվել է Անկարա։ Թուրքական կառավարությունը դա ընդունելի՞ է համարում և ինչպես է վերաբերվում ա՛ն կետերին, որոնք տարաձայնություն էին առաջ բերել մեր և Ռեքիր Սամիի միջև, որոնց պատճառով վերջինս չկարողացավ որոշում ընդունել»[8]։

Դեկտեմբերի 3-ին Չիչերինը ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյին ներկայացնում է Սովետական Հայաստանի վերաբերյալ տարվելիք քաղաքականության մասին առաջարկներ։

Նա գրում է, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատման կապակցությամբ փոխվել է ողջ իրադրությունը և Մդիվանուն պետք է տալ նոր դիրեկտիվներ.

«Հայաստանի սովետականացումը պահանջում է նոր դիրեկտիվներ տալ Մդիվանուն։ Եթե մենք Սովետական Հայաստանին դիվանագիտական աջակցություն ցույց չտանք, դա ամենուրեք հիասթափություն կառաջացնի սովետական իշխանության կողմնակիցների մեջ։ Մենք, ցավոք սրտի, մինչև այժմ չգիտենք, թե որոնք են հաշտության թուրքական պայմանները։ Մդիվանին պետք է սանձահարի թուրքերին և չափավորի նրանց պահանջները Հայաստանի նկատմամբ... Թուրքերը մեզնից օգնություն են սպասում ոսկով և զենքով, և մենք այդպիսով նրանց վրա ազդելու հզոր միջոց ունենք։ Պարզ է, որ Անտանտից դեռևս նրանք չեն ստանում, մենք կարող ենք թուրքերին խոստանալ վերսկսել մեր օգնությունը պայմանով, եթե նրանք դուրս գան Հայաստանից...

Հայաստանի անկախությունը պետք է երաշխավորվի, միաժամանակ մենք առաջվա պես պետք է պնդենք, որ սահմանագծման հարցը տրվի մեր մասնակցությամբ խաղաղ հանձնաժողովի լուծմանը»։

Դեկտեմբերի 4-ին Քաղբյուրոն հանձնարարում է արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին Մդիվանու համար մշակել նոր դիրեկտիվներ։ Մդիվանու խնդիրը Քաղբյուրոն համարում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարելը, Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև բարեկամության դաշնագրի կնքման համար բանակցություններ նախապատրաստելը։ Մշակված դիրեկտիվները Օրջոնիկիձեի միջոցով Չիչերինը անմիջապես ուղարկում է Մդիվանուն։

Դեկտեմբերի 4-ին Օրջոնիկիձեն զեկուցում է Չիչերինին, որ դիրեկտիվները հաղորդվել են Մդիվանուն. «Մդիվանու առաջ իմ կողմից հարց է դրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման կապակցությամբ մեր մասնակցությամբ խաղաղ հանձնաժողով ստեղծելու։ Հուսով եմ այսօր պատասխանը ստանալ»[9]։

---

[7] Архив ИМЛ, ф. 85, оп. 14, д. 22.

[8] «Документы внешней политики СССР», т. III. Госполитиздат, 1959, стр. 364—365.

[9] Архив ИМЛ, ф. 85, оп. 14, д. 49.

Նույն օրը Չիչերինը գրում է Օրջոնիկիձեին. «Հայաստանի սովետականացումը արմատապես փոխում է դրությունը։ Այդ հասկանում են թուրքերը։ Պետք է պնդել մեր մասնակցությամբ խառը հանձնաժողովի ստեղծման վրա»[10]։

Դեկտեմբերի 4-ին Օրջոնիկիձեն Մդիվանու հաղորդումների հիման վրա հեռագրում է Մոսկվա, որ քեմալականներն անվստահությամբ են վերաբերվում հայ կոմունիստներին և մտադիր են շարունակել իրենց հին քաղաքականությունը։

Դեկտեմբերի 5-ին Չիչերինը քեմալականներին նախազգուշացնելու և հարաբերությունների հետագա բարդացումը կանխելու նպատակով Սովետական կառավարության հանձնարարությամբ պահանջում է Մդիվանուց հասկացնել տալ թուրքերին, որ նման սկիզբը կարող է ունենալ վատ վախճան, ուստի քեմալականները պետք է փոխեն իրենց վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ։

«...Պետք է պնդել, որ թուրքերը այսուհետև ոչ միայն առաջ չշարժվեն Հայաստանի տերիտորիայով, այլև հետ քաշեն զորքերը մինչև Արփաչայը, որը Կարսի նահանգը բաժանում է մնացած Հայաստանից։ Չենք առարկում մինչև Հայաստանի հետ տերիտորիալ հարցերի լուծումը Կարսի նահանգում թուրքերի ժամանակավորապես մնալուն։

Պետք է պնդել հաշտության պայմանների մեղմացման վրա, հատկապես կոնտրիբուցիայից թուրքերի հրաժարվելու վրա։ Շարունակում ենք պնդել, որ հայ-թուրքական սահմանագծումները հանձնվեն մեր մասնակցությամբ խառն հանձնաժողովին...»[11]։ Վերջում Չիչերինը նախազգուշացնում էր, որ միանայ պայմանների կատարման դեպքում ՌՍՖՍՌ-ի կառավարությունը կհավատա քեմալականների անկեղծությանը և նրանց ցույց կտա ֆինանսական և ռազմական աջակցություն։

Այդ օրերին ինտենսիվ գրագրություն է տեղի ունենում Օրջոնիկիձեի, Չիչերինի, Լեգրանի և Մդիվանու միջև։ Կարաբեքիրի նկատմամբ մնալով իր հին դիրքերում, Մդիվանին դեկտեմբերի 5-ին հիստերիկ հեռագիր է տալիս, որ սովետական կողմը չպնդի թուրքերի կողմից արվելիք զիջումների վրա, հայ-թուրքական կոնֆերանս հրավիրելու և Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայելու վրա։ Նա գտնում է, որ թուրքերին պետք է վստահել, վերջ տալ զենք բաց թողնելու արգելքին և Նովորոսիյսկում սպասող թուրքական նավերը բարձել զենքով, շտապեցնել ռուս-թուրքական կոնֆերանսի հրավիրումը Մոսկվայում։ Մդիվանին ամեն կերպ աշխատում է համոզել Օրջոնիկիձեին և Չիչերինին, որ նրանք Կարաբեքիրի նկատմամբ վարեն սիրալիր քաղաքականություն՝ Կարաբեքիրին համարելով Սովետական Ռուսաստանի համար ամենաձեռնտու թուրք մարդը և «Անգլիայի համոզված հակառակորդը»։

Դեկտեմբերի 8-ին Չիչերինը Օրջոնիկիձեին գրում է, որ թուրքերը չեն ցանկանում պայմանագիր կնքել հայ կոմունիստների հետ և ասում են, թե բոլոր հարցերը կորոշվեն Ռուսաստանի հետ, Մոսկվայի բանակցությունների ժամանակ, հայ կոմունիստների մինիմալ մասնակցությամբ. «Ի՞նչ է նշանակում այդ, ի՞նչ է հայտնում Մդիվանին, դա ձգձգման կամ Հայաստանի Սովետական կառավարությանը բարոյապես հեղինակազրկելու փորձ չէ՞ արդյոք։ Եթե թուր-

10 Նույն տեղում։

11 Архив ИМЛ, ф. 64, оп. 2, д. 11, л. 279.

քերը մեզ հետ բանակցելու համար ցանկանում են Մոսկվա գալ, թող շուտ գան, բայց Հայաստանին հարկավոր է շուտափույթ խաղաղություն տալ, չնայած սահմանագծումների որոշ հարցեր լավ կլինի հետաձգել»։

Նույն օրը պատասխանելով Չիչերինին՝ Օրջոնիկիձեն գրել է. «Խոսքը ոչ թե հաշտության պայմանագիրը կնքելու մասին է, այլ դեկտեմբերի 2-ին Խատիսյանի ստորագրած պայմանագրի վերանայման մասին։ Թուրքերը շատ քիչ են վստահում հայ կոմունիստներին, մանավանդ, որ կառավարության կազմում կան այնպիսի մարդիկ, ինչպես Դրոն, որին թուրքերը ուղղակի մատնացույց են անում որպես իրենց ոխերիմ թշնամուն... եթե նույնիսկ մենք Դրո՛ին հանենք, միևնույն է, թուրքերը պետք է խոսեն անվստահության մասին...»։ Օրջոնիկիձեն հենվելով Մդիվանու հեռագրի վրա, Չիչերինին հայտնում է, որ թուրքերը Հայաստանի սովետական կառավարությանը չեն վարկաբեկի, պատերազմ Սովետական Հայաստանի դեմ չեն սկսի[12]։

Դեկտեմբերի 11-ին ուղիղ գծով կապվելով Չիչերինի հետ՝ Օրջոնիկիձեն նրան հայտնում է, որ արդեն հաղորդվել են Մդիվանուց երկու զեկուցագիր և մեկ ծածկագիր, որոնցում շարադրված է թուրքերի դիրքը. վերջնականորեն հրաժարվում են Հայաստանի սովետական կառավարության հետ բանակցելուց, Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման մտքից և հա տարարում են, որ բոլոր հարցերը կլուծվեն Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսում։

Օրջոնիկիձեն պահանջում է Մդիվանուն լիազորություններ տալ թուրքերի հետ դաշինքի շուրջը բանակցություններ սկսելու։

Չիչերինը դրան չի համաձայնում, ասելով՝ որ դաշինքի պայմանների մասին կխոսվի Մոսկվայում, ուր հավաքված են բոլոր տեղեկությունները։ Մդիվանին կարող է միայն արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցչի դեր կատարել և այդպիսի մանդատ նրան կուղարկվի։

Մդիվանու հակառակ դիրքից էր գործում Հայաստանում ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը։ Նա դեկտեմբերի 6-ին Չիչերինին և Օրջոնիկիձեին հղած հեռագրում գրում էր.

«Նկատի ունենալով, որ Կարաբեքիրը համառորեն հրաժարվում է Հայաստանի կառավարության հետ հաշտության բանակցություններ սկսել և նրա այն հայտարարությունը, որ հայկական հարցը ենթակա է հայ կոմունիստների մինիմալ մասնակցությամբ Մոսկվայում հրավիրվելիք ռուս-թուրքական կոնֆերանսի լուծմանը, անհրաժեշտ է Ձեր հեղինակավոր դիմումը Անկարա ի կառավարությանը՝ Սովետական Ռուսաստանի մասնակցությամբ անհապաղ հայ-թուրքական կոնֆերանս հրավիրելու մասին»[13]։

Դեկտեմբերի 7-ին Լեգրանը Չիչերինին առաջարկում է «...չսպասելով թուրքական պատվիրակության Մոսկվա գալուն՝ շտապ Ալեքսանդրապոլ գործուղել հեղինակավոր մի ընկերոջ, որպեսզի Կարաբեքիրի վրա հնարավոր ճնշում գործադրի»[14]։

Լեգրանը խնդրում է Մդիվանուց վերջնականորեն պարզել և հայտնել, թե ե՞րբ են թուրքերը դատարկելու Ալեքսանդրապոլը։

---

12 Архив ИМЛ, ф. 85, оп. 14, д. 50.

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 273։

Դեկտեմբերի 11-ին Մդիվանին հայտնում է Լեդրանին, որ թուրքերը որոշել են առայժմ Ալեքսանդրապոլը չթողնել, քանի դեռ Հայաստանում սովետական իշխանությունը չի ամրապնդվել և բավականաչափ կարմիր զորքեր չկան...»։

Այսպիսով թուրքերն ամեն անգամ մի պատճառ էին հորինում արդարացնելու համար իրենց թշնամական գործողությունները՝ դրանց տալով «ռևոլյուցիոն» կերպարանք։ Դաշնակների և Դրոյի հարցը թուրքերը հոլովում էին զուտ քաղաքական դեմագոգիայի նպատակով. քեմալականները ոչ միայն շահագրգռված չէին դաշնակներին մեկուսացնելու հարցում, այլ, ընդհակառակը, իրենք նրանց հետ սերտ կապեր էին ստեղծում՝ Ռևկոմին տապալելու նպատակով։

Սովետական Հայաստանում քեմալականների վարած ամբողջ քաղաքականությունը հետապնդում էր այդ նպատակը, որովհետև հասկանալի է, որ դաշնակների իշխանության պայմաններում Հայաստանի հետ հաշիվ տեսնելը նրանց համար ավելի հարմար և հեշտ կլիներ, քան սովետական իշխանության առկայության պայմաններում, որի թիկունքին կանգնած էր Սովետական Ռուսաստանը։

Երբ Ժողովրդական Կոմիսարների Սովետին պարզ է դառնում, որ Թուրքիան Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելուց և Հայաստանի ռևկոմի հետ Սովետական Ռուսաստանի միջնորդությամբ բանակցությունների մասին առաջարկներից հրաժարվում է և պնդում Մոսկվայի բանակցությունների վրա, ընդառաջում է թուրքերի ցանկությանը և համաձայնում Մոսկվայում դումարել ռուս-թուրքական կոնֆերանս՝ Սովետական Ադրբեջանի և Սովետական Հայաստանի մասնակցությամբ։

Դեկտեմբերի 6-ին Չիչերինը Կենտկոմին գրում է նամակ, որտեղ ասված էր.

«Առաջարկում ենք Կենտկոմին հանձնարարել Արտգործժողկոմատին մշակելու Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծ, որի մեջ նախատեսված լինեն երաշխիքներ Վրաստանի և Հայաստանի անկախության վերաբերյալ։ Հայաստանի և Թուրքիայի սահմանների որոշումը պետք է կատարվի խառը հանձնաժողովի կողմից մեր մասնակցությամբ, պետք է հաշվի առնվեն ինչպես հայ, այնպես էլ մահմեդական բնակչության էտնոգրաֆիկ պահանջները։ Այնուհետև պայմանագրում պետք է հոդվածներ լինեն քաղաքացիների փոխադարձ իրավունքների, ապրանքափոխանակության և այլ հարցերի մասին, որոնք արդեն մշակված են թուրքական ներկայացուցիչ Բեքիր Սամիի հետ՝ նրա Մոսկվայում գտնված ժամանակ»։

Այդ առթիվ Չիչերինի ստորագրությամբ Անկարայի կառավարությանն ուղարկված նոտայում պահանջվում էր Սովետական Հայաստանի մասնակցությունը կոնֆերանսին, քանի որ կոնֆերանսը պետք է քննարկի Հայաստանի արմատական շահերը շոշափող հարցեր.

«Ռուսաստանի Սովետական կառավարությունը, ստանալով թուրքական կառավարության առաջարկությունը Մոսկվայի կոնֆերանսի մասին ուրախությամբ ընդունում է այդ նախաձեռնությունը և միաժամանակ անհրաժեշտ է համարում Հայկական և Ադրբեջանական Սովետական կառավարությունների ներկայացուցիչների ներկայությունը, քանի որ այդ պետությունների, Թուր-

15 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 50։

քիայի և Ռուսաստանի միջև պետք է լուծման ենթարկվեն տերիտորիալ և այլ հարցեր»[16]։

Օրջոնիկիձեն կապվելով Լենինի հետ՝ հարցնում է Թուրքերի դիրքի և Մղիվանու վարքագծի մասին, հաղորդում Չիչերինի վերոհիշյալ նոտան, հանձնարարում նախապատրաստել Մոսկվայի կոնֆերանսին հայկական պատվիրակության մասնակցությունը։

Չիչերինի վերջին խոսքերն ամբողջապես ուղղված են բեմալական կառավարության թշնամական այն քաղաքականության դեմ, որ նա իրագործում էր Հայաստանի օկուպացված շրջաններում և Ալեքսանդրապոլի պայմանագրի ուժով ձգտում էր կիրառել նաև Սովետական Հայաստանում։

Մեր նպատակը չէ լուսաբանել Մոսկվայի կոնֆերանսի ընթացքը, սակայն հարկ ենք համարում նշել, որ չնայած Հայաստանի կառավարության պատվիրակությունը Ալեքսանդր Բեկզադյանի գլխավորությամբ ժամանեց Մոսկվա, բայց նա կոնֆերանսին մասնակցելու հնարավորություն չունեցավ։ Թուրքական պատվիրակությունը հրաժարվեց մեկ սեղանի շուրջը նստել նրա հետ, պատճառաբանելով, որ մտադիր չէ Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայել, որովհետև Վրացյանը, որը Երևանում դաշնակների փետրվար ան հեղաշրջման հետևանքով գտնվում էր իշխանության գլուխ, հեռագրել էր, թե Հայաստանի հարցը ենթակա չէ Մոսկվայի կոնֆերանսի քննարկմանը և, որ «Հայրենիքի փրկության կոմիտեն» կանգնած է Ալեքսանդրապոլի պայմանագիրը պաշտպանելու դիրքերում։

Այսպիսով, Մոսկվայի կոնֆերանսը կայացավ Սովետական Հայաստանի համար անբարենպաստ պայմաններում և Սովետական Ռուսաստանի կառավարությունը զրկվեց իրավական հնարավորությունից՝ հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու այնպես, ինչպես այն նախագծվում էր։ Դաշնակները մի ծառայություն ևս մատուցեցին Թուրքիային։

* * *

Թուրքական գավթիչներից Ալեքսանդրապոլի ազատագրման հարցը ծառացավ Հայաստանում սովետական իշխանության հաստատման օրն իսկ։ Դա Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պայմանն էր։ Ալեքսանդրապոլում էր գտնվում Հայաստանի երկաթուղային միակ դեպոն՝ Երևանը արտաքին աշխարհի հետ կապող միակ երկաթուղային հանգույցը։

1921 թվականի մարտի 16-ին ՌՍՖՍՌ-ի և Թուրքիայի միջև կնքված բարեկամության պայմանագրի համաձայն թուրքերն անհապաղ պետք է ազատեին Ալեքսանդրապոլը։ Սակայն նրանք նենգաբար ձգտում էին դանդաղ պատրվակներով ձախողել այդ պայմանագիրը և ամրապնդել իրենց դիրքը, հենվելով Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագրի վրա։ Փետրվարյան ապանտյուրայի ժամանակ թուրքերը դա բացատրում էին դաշնակների իշխանության գլուխ գտնվելով, որ նրանք վտանգ են սպառնում Թուրքիայի անկախությանը։ Մինչդեռ պարզ էր, որ թուրքերը Ալեքսանդրապոլում իրենց գտնվելը օգտագործեցին Սովետական Հայաստանը բլոկադայի ենթարկելու և բնակչությանը սովի մատնելու միջոցով տապալել սովետական իշխանությունը և վերականգնել դաշնակների արդահատելի ռեժիմը, որպեսզի վկա-

[16] Архив ИМЛ, ф. 85, оп. 14, д. 51, л. 10.

յակոչելով դաշնակների վտանգը, մնան Ալեքսանդրապոլում։ Այդպես էլ նրանք վարվեցին, համոզված լինելով, որ Սովետական Ռուսաստանը զրկելով կատարված փաստի առաջ՝ ուժի չի դիմի։

Փետրվարյան ամանորյայի ջախջախումից հետո, Թուրքերն այլևս պատրվակ չունեին և նրանց առաջարկվեց Մոսկվայի պայմանագրի համաձայն անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը։

1921 թվականի ապրիլի 6-ին Գ. Վ. Չիչերինը ՌՍՖՍՀ-ում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուատին գրել է.

«Պարոն դեսպան,

Մենք տեղեկություններ ենք ստացել այն մասին, որ կոմունիստները ապրիլի 2-ին կրկին գրավել են Երևանը և որ կոմունիստների կողմից հետապնդվող հակառևոլյուցիոն դաշնակների այնտեղ գտնվող մնացորդները փախել են Զանգեզուր, որտեղ նրանց ուժերը շուտով լիովին կդադարեն գոյություն ունենալուց։ Քանի որ Ալեքսանդրապոլի և Երևանի ամբողջ շրջանը կրկին Հայկական Սովետական կառավարության ձեռքին է գտնվում, հասել է թուրքական զորքերի սահմանի այն կողմն անցնելու ժամանակը, որ սահմանված է Մոսկվայի պայմանագրով, և մենք հաստատ հույս ունենք Զեյթանից շատով պատասխան ստանալու այն մասին, որ հայկական տերիտորիայից թուրքական զորքերի էվակուացումն ավարտված է»[17]։

Ալի Ֆուատը ապրիլի 7-ին Չիչերինին ներկայացնում է հետևյալ պատասխանը.

«...Ես շատ ուրախ եմ իմանալու, որ Երևան քաղաքը կոմունիստների կողմից կրկին գրավված է 1921 թվականի ապրիլի 2-ին և որ Զանգեզուրի լեռներում թաքնված հակառևոլյուցիոներները շուտով ոչնչացվելու են։ Ես շատ ուրախ եմ, որ Հայաստանում այդպիսով անհետացել են իրավունքը և պարտությունը, որոնք կույր գործիք էին իմպերիալիստների ձեռքին։ Ես իմ կառավարությանը հաղորդել եմ Ալեքսանդրապոլ քաղաքը այդ նոր իրադրության կապակցությամբ դատարկելու վերաբերյալ ձեր ցանկությունը։ Քանի որ հակառևոլյուցիայի գործոնները, որոնք ամբողջ ժամանակ հարկադրում էին մեզ մեր Արևելյան ռազմաճակատում ռազմական միջոցներ ձեռնարկել, գտնվում են իրենց անհետացման եզրին, Ալեքսանդրապոլ քաղաքը, որ Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով թողնված է Հայաստանին և գտնվում է մեր օկուպացիոն գոտում գուտ ռազմական նկատառումներով, որոնք կապված էին հայկական հակառևոլյուցիայի հետ, ինչպես ես հուսում եմ, կէվակուացվի այնքան շուտ, որքան հնարավորություն կտան հանգամանքները»[18]։

Ալի Ֆուատի այս փարիսեցիությունը մերկացվում է Կարաբեքիրի փաշայի ապատնային հայտարարությամբ։

Թուրքիայի Արևելյան բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը հրաժարվելով զորքերը դուրս հանել Ալեքսանդրապոլից լիտիարար պատերազմ է սպառնում Սովետական Հայաստանին հայտարարելով, որ միայն զենքի ուժով կարող են տեղից շարժել թուրքական զորքերին և, որ ինքը չի ճանաչում Մոսկվայի դաշնագիրը։ Այդ մասին Օրջոնիկիձեն անհապաղ հայտնում է Գ. Վ. Չի-

---

17 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 510—511։

18 «Документы внешней политики СССР», т. IV, стр. 49.

չերինին։ Չիչերինը ապրիլի 6-ին Օրջոնիկիձեին գրում է. «Ալի Ֆուատը ինձ խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը։ Նրան իսկույն ևեթ հաղորդում եմ Կարսի խուլիգանության մասին՝ մատնանշելով, որ Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև»[19]։

Կարսի խուլիգանությունը պատահական չէր, ոչ էլ պետական գործչի անպատասխանատու հայտարարություն, այլ պետական քաղաքականության դրսևորում։ Այդ օրերին Թուրքիայի կառավարական շրջաններում ՌՍՖՍՌ-ի դեմ սպառնալիքի, շանտաժի և պրովոկացիաների մի ալիք է բարձրանում։ Ամենից բարձր աստիճում էին ռազմական գործիչները։

Թուրքիայի ռազմական մինիստր Քեմալ Ֆեվզի փաշան հայտարարել էր, որ Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը մնալով Կովկասում, պետք է այնտեղ կատարի հավասարակշռություն պահպանելու դեր։ Չիչերինը ապրիլի 8-ին Թուրքիայի դեսպան Ալի Ֆուատին այդ հայտարարության մասին գրել է. «...Ինձ համար դժվար է հասկանալ, թե Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը ուրիշ ինչ ռազմական ուժի դեմ է նախապատրաստված հանդես գալու՝ Կովկասում հավասարակշռություն պահպանելու համար։ Քանի որ այդ շրջանում մյուս միակ ռազմական ուժը Սովետական ռեսպուբլիկաների միավորված Կարմիր բանակն է, հետևություն է արվում, որ ռազմական մինիստրի կարծիքով, թուրքական բանակը պետք է հանդիսանա մի տարր, որը թշնամի է սովետական ուժերին և նպատակ ունի հակակշիռ ուժ հանդիսանալ նրանց ռազմական հզորություններ։ Ինձ շատ զարմանալի է թվում, որ մեր միջև Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո, մի պայմանագիր, որով ստույգ որոշված են թուրքական և սովետական ռազմական ուժերի իշխանությունների սահմանները, Թուրքիայի ռազմական մինիստրը թուրքական զորքերի վրա խնդիր է դնում կատարելու մի դեր, որը թշնամական է սովետական զինված ուժերի հանդեպ»[20]։

Չիչերինը մերկացնում է թուրքական ագրեսորների բացահայտ թշնամությունը ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև ՌՍՖՍՌ-ի նկատմամբ։ Անդրադառնալով Ալեքսանդրապոլի պայմանագրին, նա գրում է. «Ես ինձ թույլ եմ տալիս Ձեզ հիշեցնել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն պահին, երբ արդեն հռչակված էր Հայաստանի Սովետական կառավարությունն և որ դա ռատիֆիկացված չէ, թեպետև, ըստ այդ պայմանագրի տեքստի, դա գործողության մեջ դնելու պայմանը հանդիսանում էր ռատիֆիկացիան մեկ ամսում։ Բայց եթե նույնիսկ մի կողմ թողնենք այդ նկատառումը, ապա Ալեքսանդրապոլի պայմանագրի բոլոր հիմնական դրույթները մասամբ վերացված են Մոսկվայի պայմանագրով, մասամբ Սովետական Ռուսաստանի բացարձակ և լիակատար սուվերենիտետի պահպանման վերաբերյալ երկու պատվիրակությունների հայտարարություններով։ Ալեքսանդրապոլի պայմանագրի կատարումը դանկալը հավասարազոր է Մոսկվայի պայմանագրի վերացմանը»[21]։

---

19 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 511։

20 Նույն տեղում, էջ 513։

21 Նույն տեղում, էջ 515։

Այդ նու_ն նոտայում Չիչերինը պահանջում է Թուրքիայի կառավարությունից տալ պարզաբանում ռազմական մինիստրի հայտարարության առթիվ և կրկին խնդիր է դնում թուրքական զորքերը անհապաղ հանել Ալեքսանդրապոլից։

Ապրիլի 8-ին Չիչերինը Օրջոնիկիձեի միջոցով Անկարա է հղում հետևյալ հեռագիրը. «Նկատի ունենալով կոմունիստների կողմից Երևանի գրավումը, անհրաժեշտ է անհապաղ կենսագործել Մոսկվայի կոնֆերանսում ընդունված նոր սահմանները և մասնավորապես, անհրաժեշտ է Ալեքսանդրապոլն անհապաղ ազատել թուրքերից։ Մեր անունից կտրական բողոք հայտնեցեք Կարաբեքիր փաշայի այն հայտարարության դեմ, թե նա չի ցանկանում ազատե Ալեքսանդրապոլը և ազգային Մեծ ժողովի կառավարությանը հաղորդեցեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ թուրքական զորքերը անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմանից այն կողմը։ Մատնանշեք այն բանը, թե ինչ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ թուրքական զորքերի ընդհարումը կարմիրբանակային զորամասերի հետ, այլև այն, որ բոլոր սովետական ռեսպուբլիկաները սերտ ու անխախտելի դաշինքի մեջ են Սովետական Ռուսաստանի հետ»[22]։

Կենտրոնական Կոմիտեն 1921 թվականի ապրիլի 9-ի հեռագրով Օրջոնիկիձեին հանձնարարում է ձեռնարկել բոլոր միջոցները Ալեքսանդրապոլն ազատագրելու համար։

Ապրիլի 13-ին բանակցություններ են տեղի ունենում Օրջոնիկիձեի և Մոսկվայից վերադարձող Յուսուֆ Քեմալի միջև Ա եքսանդրապոլը և զավառը թուրքական զորքերից դատարկելու վերաբերյալ։ Օրջոնիկիձեն թուրքական ներկայացուցչի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է. «Մենք հազար անգամ հայտարարել և հայտարարում ենք, որ դեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլյան պայմանագիրը չենք ճանաչել և չենք ճանաչում»։

1921 թվականի ապրիլին Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Գեկկերը և Էլիավան լինում են Ալեքսանդրապոլում և թուրքական հրամանատարությունից պահանջում են զորքերը անհապաղ դուրս բերել Ա եքսանդրապոլից և նրա շրջանից։

Երբ թուրքական ներկայացուցիչները Ղարաքիլիսայում Երևանից վերադարձող Օրջոնիկիձեի հետ ցանկանում են տեսակցություն ունենալ և բացատրություններ տալ, նա կտրականապես հայտարարում է. «Քանի դեռ թուրքական վերջին ասկերը չի հեռացել Ալեքսանդրապոլից, ես ձեզ հետ չեմ խոսելու»։

Սովետական կառավարության պնդումներից և սպառնալից նախազգուշացումներից հետո թուրքերը տեսան և համոզվեցին, որ իրենց համառումը կարող է պատերազմական կոնֆլիկտ առաջացնել, ուստի և հարկադրված եղան իրենց զորքերը հանել Ալեքսանդրապոլից և կատարել Մոսկվայի պայմանագրի այդ կետը։

Կովկասյան բանակի Ռազմա-հեղափոխական խորհրդի կողմից սովետական զորքերի մուտքը Ալեքսանդրապոլ նշանակվեց ապրիլի 22-ը։

Ապրիլի 21-ին Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Դ. Վելիկանովը ստորագրում է հետևյալ հրամանը. Համաձայն Մոսկվայի պայմանագրի, թուրքական զորքերը ս/թ. ապրիլի 22-ին մաքրում են Ալեքսանդրապոլը։ 11-րդ

22 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 513։

բանակի հրամանատարը իր ղեկավարության տակ գտնվող զորախմբին հրամայել է մեկ բրիգադայով մտնել Ալեքսանդրապոլ քաղաքը և ընդունել Թուրքիայի հետ սահմանի պաշտպանությունը։

Ապրիլի 22-ին 60-րդ բրիգադան հրամանատար Տիխոմիրովի ղեկավարությամբ թուրքական հեռացող զորքերին կրնկակոխ մտնում է Ալեքսանդրապոլ։

1921 թվականի ապրիլի 22-ը Ալեքսանդրապոլի ազատագրման օրն է։ Դա երջանիկ օր է հայ ժողովրդի համար։ Լենինականի փրկության օրը զուգադիպում է Լենինի ծննդին։

Դա պատահական զուգադիպություն չէ։ Լենինի հոգատարությամբ և նրա մեծ ջանքերով փրկվեց այն հողակտորը, որի վրա այսօր կառուցվում և բարգավաճում է մեր Լենինականը, Հայաստանի երկրորդ քաղաքը։

Ա ն ամբողջովին ավերակի էր վերածված, երբ այնտեղ ոտք դրին սովետական զորքերը։ Թուրքերը Ալեքսանդրապոլում եղել էին 6 ամիս, բայց այդ կարճ ժամանակամիջոցում նրանք ավերել և կողոպտել էին քաղաքը, դատարկել նրա պահեստները, տարել ամբողջ ունեցվածքը։

Երբ Կարմիր Բանակի զորամասերը մտնում են քաղաքը և տեղավորվում Ալեքսանդրապոլի զորանոցներում, տեսնում են, որ զորանոցները լրիվ դատարկված են։

«Ես երբեք այդպիսի սարսափելի պատկերներ չեմ տեսել, որպիսիք Ալեքսանդրապոլում էին և դրանք բոլորը թուրքական բանակի տիրապետության հետևանքներն էին»[23], գրել է 20-րդ դիվիզիայի քաղաշխատող Մ. Վ. Խարլամովը Ալեքսանդրապոլ մտնելու պահին։

Թուրքական զավթիչները մեծ ավերածություն էին պատճառել ոչ միայն քաղաքին, նրա հիմնարկներին, այլև ռազմական օբյեկտներին։ Այդ մասին Չիչերինը 1921 թ. մայիսի 13-ին Ալի Ֆուադին գրե՝ է.

«Ռուսաստանի կառավարությունը Կովկասի իր ռազմական իշխանությունների կողմից իրազեկ է դարձված այն մասին, որ թուրքական զորքերը, էվակուացնե՝ ով Ալեքսանդրապոլը նյութական մեծ վնաս են պատճառել Ռուսաստանի ռեսպուբլիկայի միավորված բանակներին և անդրկովկասյան ռեսպուբլիկաներին, այդ թվում նրանք պայթեցրել են ա՝ դ բանակներին պատկանող վառոդի պահեստները, որ չափազանց մեծ կորուստ է և որի դումարը դեռևս հաշված չէ։ Ռուսաստանի կառավարությունը վճռականապես բողոքում է բարեկամական երկրի ռազմական իշխանությունների թշնամական գործողությունների դեմ։ Այդ գործողությունները նրա մեջ առավել ևս զարմանք են առաջացնում, որ դրանք կատարվում են նույն այն պահին, երբ Ռուսաստանի կառավարությունը բարեկամական Ազգային մեծ ժողովի կառավարությանը ցույց է տալիս ա ն ամբողջ օգնություններ, որպիսին նա ի վիճակի է ցույց տալ։

Ռուսաստանի կառավարությունը իրեն իրավունք է վերապահում անդրադառնալ այդ հարցին, երբ նա իր ռազմական գերատեսչություններից կստանա ավելի մանրամասն տեղեկություններ»[24]։

Փլատակների վերածված և կողոպտված Ալեքսանդրապոլը կոմունիստական պարտիայի հոգատարության շնորհիվ հասել է մեծագույն հաջողությունների։

---

23 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 526—527։

24 «Документы внешней политики СССР», т. IV, стр. 123.